ԵՐՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպութան անդամ պետությունները (այսուհետ՝ Կողմեր),

նպատակ ունենալով բարձրացնելու Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) գործունեության արդյունավետությունը,

ձգտելով համագործակցության հետագա զարգացման Կազմակերպության անդամ չհանդիսացող պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ,

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության 2002 թ. հոկտեմբերի 7-ի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) 27-րդ հոդվածի համաձայն,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

1. Կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ՝ VII գլուխը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ VII
ԴԻՏՈՐԴՆԵՐ ՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Հոդված 21

Կազմակերպության անդամ չհանդիսացող պետությունները, նաև միջազգային կազմակերպությունները, որոնք հետաքրքրված են Կազմակերպության բաց նորմատիվ իրավական բազայի, փորձի և գործունեության պրակտիկայի ուսումնասիրությամբ՝ առանց Կազմակերպության գործնական միջոցառումներին մասնակցության պարտավորության, կարող են Կազմակերպությունում ստանալ Դիտորդի կարգավիճակ:

Կազմակերպությունում Դիտորդի կարգավիճակը, ստանալու կարգը և դադարեցումը սահմանվում են Խորհրդի կողմից հաստատված համապատասխան կանոնակարգով:

Հոդված 21[1]

Կազմակերպության անդամ չհանդիսացող պետությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները, որոնք ընդունում են Կազմակերպության նպատակներն ու սկզբունքները և ցանկություն են հայտնում հաստատելու և զարգացնելու երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում Կազմակերպության հետ փոխշահավետ համագործակցություն՝ Կազմակերպության գործնական միջոցառումներին մասնակցության պարտավորությամբ, կարող են ստանալ Կազմակերպության գործընկերոջ կարգավիճակ:

Կազմակերպության Գործընկերոջ կարգավիճակը, դա ստանալու կարգը և դադարեցումը կարգավորվում են Խորհրդի կողմից հաստատված համապատասխան կանոնակարգով»:

2. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կանոնադրության 26-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Կատարված է Աստանա քաղաքում 2018 թ. նոյեմբերի 8-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որը սույն Արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր Կողմին կուղարկի Արձանագրության հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից

/ստորագրություն/

Ղրղզստանի Հանրապետության կողմից

/ստորագրություն/

Բելառուսի Հանրապետության կողմից

/ստորագրություն/

Ռուսաստանի Դաշնության կողմից

/ստորագրություն/

Ղազախստանի Հանրապետության կողմից

/ստորագրություն/

Տաջիկստանի Հանրապետության կողմից

/ստորագրություն/

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության» Կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» երրորդ արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն